

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

9257

ՀՅԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 39


Ը Ա Զ Ե Վ 198

Ե. ԿՈՒԲԻՆԻ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
ԳՅՈՒՂՈՒՄ

Թարգմ. Գ. Ներսիսյան

ԳՐԱԴԱՐԱՆ  
ԱԿԱԴԵՄԻԿԱԿԱ  
ԽՈՏՈՆԵԼՈՒՄ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀՍՏԱԴԻ



Պական հրատարակչություն  
8դրեվան - 1926

№437 ЗКН5  
Г-81  
25 SEP 2006  
100522009


ԿՈՄԻՏԵՐՆԱԾՈՒՅՈՒՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Հ/Հ 1356 Ավարտին

БИБЛИОТЕКА  
НИИ СТИХИЯ  
ВОЗРОДИТЕЛЬНИЦЫ  
Академии Наук  
С СР

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
ԳՅՈՒՂԱԿԱՐ

Թարգմ. Գր. Ներսիսյան



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Տերեփու — 1926

9257

24.05.2013

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Այն հիմնական գծերից մեկը, վորը  
միշտ տարբերել ե բայց կիկներին մնա-  
ցած բոլոր այսպես կոչված սոցիալիս-  
տական կուսակցություններից (մենշե-  
վիկներից, սոցիալիստ-հեղափոխական-  
ներից և մյուսներից), դեպի զյուզա-  
ցիությունն ունեցած տարբեր մոտեց-  
ման մեջ ե կայացել:

Գյուղացիական հարցն այն ժամանակ  
գեռ միասնական սոցիալ-դեմոկրատա-  
կան կուսակցության բազմաթիվ հա-  
մագումարներում տաք վիճաբանության  
նյութ եր դարձել:

Բայլզեկների հիմնական տեսակետն  
այն եր, վոր պըրոլետարքատը հեղա-  
փոխության հիմնական ուժն է հանդի-  
սանում: Միայն նա յե, վոր ընդունակ



N 342

Դրամեագիր 323 ր.

56590-66

Գիտնական առաջնորդության վաղարշապատում

Ե հասցնել ամբողջ մարդկությունը սուցիալիզմին։ Սակայն այդ ազատազրական պայքարում բանվոր դասակարգը պետք է ունենա իր դաշնակիցները։ Այդպիսի ամենից ավելի հավատարիմ դաշնակից հանդիսանում է գյուղացիությունը, քանի վոր եյապես նա ավելի պակաս չե ճնշված, քան բանվոր դասակարգը։ Ինչպես բանվոր դասակարգը, այնպես և գյուղացիության ահազին մեծամասնությունը դժգոհ եյին ցարիզմից և ցանկանում եյին նրա տապալումը։ Ի՞արկե, վոչ միայն բանվորներն ու գյուղացիներն եյին դժգոհ ցարիզմից, այլև ինտելիգենցիայի զգալի մասը, և նույնիսկ հաճախ բուրժուացիան։ Բայց այդ դժգոհությունները տարբեր եյին։ Բուրժուազիան և ինտելիգենցիան ցանկանում եյին տապալել ցարիզմը, վորպեսզի նրա տեղը հաստատեն բուրժուական հանրապետություն, այսինքն այն, ինչ այժմ գոյություն ունի Ռուսաստանում։ Գեր-

մանիայում և մյուս յերկրներում։ Իսկ բանվորներն ուզում եյին տապալել ցարիզմը նրա համար, վոր առտաքսեն վոչ միայն թագավորին ու նրա մինիստրներին, այլ նրանց հետ միասին նաև բոլոր բուրժուաներին՝ գործարանատերերին, բանկիրներին, կալվածատերերին և ստեղծեն սոցիալիստական հանրապետություն, այսինքն այն, ինչ այժմ գոյություն ունի Ռուսաստանում։

Այդպիսի հեղաշրջում կատարելլը ծանըը գործ է, վորը պահանջում է բանվոր դասակարգից մեծ կազմակերպվածություն, տոկունություն և պաշտպանություն նրանց կողմից, վորոնց շահերը մոտ են բանվորի շահերին։

Գյուղացիությունն իր մասսայով ներկայացնում է ձիշտ այնպիսի միշերտ, վորը նույնպես ցանկանում է քշել իր կեղեքիչ-կալվածատերերին և հեռու չե քշել նաև զործարանատիրոջն ու վաճառականին, վորոնք միայն ա-

ոիթ են վնտոռմ ինչքան կալելի յե  
թանգ ծախելու գյուղացուն իրենց ապ-  
րանքը և գնելու նրանից աննշան գնով  
նրա հացը և գյուղատնտեսական հում  
նյութերը:

Քանի զոր այդ տեսակետից հիմա-  
կանում բանվորի և գյուղացու շահերը  
զուգադիպում են, շատ բնական ե, զոր  
նրանք իրանց պայքարի ընթացքում  
պետք ե միանան ընդհանուր թշնամու-  
թեմ:

Մեր յերկրում, զորտեղ գյուղացի-  
ությունն ավելի յե ճնշված յեղել  
վորտեղ նա կազմում ե բնակչության  
վիթխարի մեծամասնությունը, բանվոր  
դասակարգի ե գյուղացիության միու-  
թյունը հատկապես մեծ նշանակու-  
թյուն ուներ:

Ահա թե ինչու Վաղիմիր Իլյիչ Լենինը  
կեռ 1905 թվին գրում եր.

«Միայն այն ժամանակ ուսւական  
հեղափոխության իսկական թափը կըս-  
կըսվի, միայն այն ժամանակ այդ կլի-

նի իրոք ամենամեծ հեղափոխական  
թափը, վորը հնարավոր ե բուրժուա-դե-  
մոկրատական հեղաշրջման եպոխայում,  
յերբ բուրժուագիան յետ կքաշվի, և  
պրոլետարիատի կողքին իբրև ակտիվ  
հեղափոխական հանդես կգա գյուղացի-  
ական մասսան:

Մեր գեմոկրատական հեղափոխու-  
թյունը, վորպեսզի հետեղականորեն  
հասնի իր վախճանին, պետք ե հենվի  
այնպիսի ուժերի վրա, վորոնք ընդու-  
նակ են ջատելու բուրժուագիայի ան-  
խուսափելի անհետեղականությունը  
(այսինքն, հենց ուղղակի ընդունակ են  
ստիպելու նրան յետ քաշվել, վորից  
կարձամտորեն վախենում են « Իս-  
կրա»-յի կովկասյան համախոհները:

Պրոլետարիատը գեմոկրատական հե-  
ղաշրջումը պետք ե հասցնի մինչև վերջը՝  
միացնելով իր հետ գյուղացիական մաս-  
սան, վորպեսզի կարողանա ուժով խեղ-  
դել միապետության դիմագրությունը  
և ջատել բուրժուագիայի անկայու-

նությունը։ Պրոլետարիատը պետք է սոցիալիստական հեղաշրջում կատարի՝ միայնելով իրեն բնակչության կիսապրոլետարական տարրերին, վորպեսզի ուժով խորտակի բուրժուազիայի դիմագրությունը և ջլատի գյուղացիության և մանը բուրժուական տարրերի անկայունությունը» \*։

Իսկ ինչ եյին խորհուրդ տալիս մեղայն ժամանակ մենշևիկները։ Նրանք ասում եյին, թե ցարիզմից դժգոհ են նաև ինտելիգենցիան և ազատամիտ բուրժուազիան (կազետները). այդ պատճառով անհրաժեշտ ե բանվորներին նրանց հետ դաշն կնքել և նրանց հետ միատեղ կռիվ մղել, վորովհետև նրանց պաշտպանությամբ բանվորներն ավելի շուտ հաղթանակ կտանեն։ Դեռ այն ժամանակ մենք՝ բայլշեիկներս մատնանշում եյինք, վոր թեպետ և ազատամիտ բուրժուազիան պայքար ե մղում

\* Լենին, Աշխատությունների ժողովածու, VI հատոր, 371 յիրես (ռուսերենը)։

ցարիզմի դեմ և այդպիսով, սբյեկտիվ կերպով, կարճ ժամանակով նրա շահերը զուգազիպում են բանվորության շահերին, բայց այդ ժամանակավոր բնույթ ե կրում, Առաջին իսկ հաղթանակից հետո նրանց շահերը կբաժանվեն հավիտենապես, մինչդեռ չքափոր և միջակ գյուղացիությունն առանձին հաղթանակից հետո յել դեռ բանվորների հետ գեպի նորանոր կռիմսեր կգնա։

Արդարացած արդյոք մեր կարծիքը։ Այն, ամբողջապես և լիովին։

1917 թվի փետրվարին միապետության տապալմանը մասնակցում եյին վոչ միայն բանվորներն ու գյուղացիները, այլև ազատամիտ բուրժուազիան։ Բայց հենց հաղթանակի հետեյալ որը, յերբ գահընկեց եր արվել Նիկալայը, և նրա տեղը բազմել եյին պարոնայը Գուչկովսերը, Լվովսերը, Միլյուկովսերը և այլն, իսկույն բանվորների և թագավորական բանակի մոխրագույն շինել հաղած գյուղացիների շահերը բաժան-

վեցին ազատամիտ բուրժուազիայի  
շահերից:

Սկսվեց բանվորների և գյուղացիների  
նոր և համառ կոխվը բուրժուազիայի  
դեմ, վորի հետ մենչեկները մեզ կոչ  
ելին անում դաշն կապել:

Բանվորների ղեկավարությամբ և  
գյուղացիության խոշոր մեծամասնու-  
թյան գործոն պաշտպանությամբ կա-  
տարվեց Հոկտեմբերյան հեղափոխու-  
թյունը, վորն ամբողջ իշխանությունը  
հանձնեց բանվորների ու գյուղացիների  
պատգամավորների խորհուրդներին:

Բայց շարունակում ե արդյոք ամ-  
բողջ գյուղացիությունը միահամուռ  
կերպով պաշտպանել խորհրդային իշ-  
խանությունը նաև Հոկտեմբերյան հե-  
ղաշրջումից հետո։ Վաչ։ Գյուղացիու-  
թյան համեմատաբար հարուստ մասը  
հեռանում ե բանվորներից և գյուղացի-  
ներից, վորովհետեւ հողերի համայնաց-  
ման ղեկրեալ պահանջում եր հողոգտա-  
գործման մեջ բոլորի հավասարեցումը,

հետեւաբար հարկ յեղավ նաև նրանց  
(կուլակների) հողերի մի մասը խլել։

Մկանում են տարածայնություններ  
հենց գյուղացիության մեջ։ Զբավոր-  
ներն ու միջակները հողերի համայնաց-  
ման մեջ տեսնում են իրենց անմիջա-  
կան շահը, այդ պատճառով ել բանվոր-  
ների հետ միասին շարունակում են հե-  
տագա կոխվը մղել, վոր քաղաքացիա-  
կան պատերազմի կերպարանք եր ստա-  
ցել։ Իսկ կուլակները բուրժուազիայի  
հետ միասին դուրս են գալիս բանվոր-  
ների և չքավորների դեմ։

Ընկեր լենինն այդ ժամանակա-  
շրջանը բնորոշում ե հետեւյալ բառերով.

«Գյուղը դադարում ե միասնական  
լինելուց։ Այն գյուղում, վորն ինչպես  
մի մարդ պայքարում եր կալվածաե-  
րերի դեմ, ծագել ե յերկու բանակ.  
աշխատավոր ամենաչքավոր գյուղացի-  
ների բանակ, վորը բանվորների հետ  
միասին հաստատուն կերպով շարու-  
նակում ե գնալ ղեղի սոցիալիզմի իրա-

կանացումը և կալվածատերերի դեմ  
մղվող կռվից անցել ե գեպի այն կռի-  
վը, վորը մղվում ե կապիտալի, փողի  
իշխանության և հողային մեծ բարենո-  
ր ո գ ման կուլակային ոգտագործման  
դեմ, և համեմատաբար ավելի ունեոր  
գյուղացիների բանսակ. Այդ կռիվը վերջ-  
նականապես յետ մղելով հեղափոխու-  
թյունից ունեօր, շահագործող դասա-  
կարգերին, փոխագրել ե մեր հեղափո-  
խությունն ամբողջովին այն սոցիալիս-  
տական ռելիսերի վրա, վորոնց վրա հաս-  
տատապես ու վճռականորեն նրան դրել  
ե քաղաքների բանվոր դասակարգը Հոկ-  
տեմբերին, բայց վորոնց վրայով նա  
յերբեք չի կարող հաղթականորեն առաջ  
մղել հեղափոխությունը, յեթե գյուղե-  
րում չգտնի գիտակցական և կուռ-հա-  
մախմբված պաշտպանություն»\*:

\* Լենին, XV հատորի: Կոմմունարների  
և Զքավորների կոմիտեների Հողբաժնի 1  
համառուսական համագումարում արտասա-  
նած ճառը:

Ծանր և վերին տստիճանի կատաղի  
քաղաքացիական կովում, չնայած սպի-  
տակ-գվարդիականների յեվրոպական  
բուրժուազիայից ստացած ոգնությանը,  
հաղթանակը տանում են բանվորներն  
ու չքավոր գյուղացիությունը: Սկսա-  
վում է խաղաղ, սոցիալիստական շի-  
նարարության առաջին շրջանը:

Այդ նոր պարագաներում ընկեր Լե-  
նինը շարունակում է անընդհատ հիշե-  
ցնել մեր կուսակցությանը և նրա մի-  
ջոցով ամբողջ բանվոր դասակարգին,  
վոր սոցիալիստական շինուարության  
ձակատում նույնպես մենք զգալի հե-  
տեանքների կհամնենք միայն բանվոր-  
ների և գյուղացիների միության մի-  
ջոցով:

«Ամենահիմնական, ամենակարևոր  
լինդիրը, դա բանվոր դասակարգի վե-  
րաբերմունքն ե գեպի գյուղացիու-  
թյունը, դա բանվոր դասակարգի մի-  
ությունն ե գյուղացիության հետ, դա-  
խոշոր գործարանի յերկար, ծանր,

բայց շահեկան դպրոցն անցած առաջավոր բանվորների հմտությունն ե, հմտությունը գործն այնպես դնելու, վոր իրենց կողմը զրավեն այն գյուղացիական մասսան, վորին ճգմել ե կապիտալիզմը, ճգմել կալվածատերերը, ճրգմել ե իր հին մուրացիկային, վորորմելի տնտեսությունը, վորպեսզի ապացուցե նրան, թե ինչպիսի գժվարություններ ել վոր կրելու լինի այդ ձևնապարհին—իսկ գժվարությունները շատ են, և աչքներս փակել նրանց հանդեպ մենք չենք կարող,—միայն այդ միության մեջ ե գյուղացիության փրկությունը կապիտալիստների և կալվածատերերի դարավոր լծից։ Միայն բանվորների և գյուղացիների դաշինքի ամրապնդմամբ ե, վոր հնարավոր ե ընդհանրապես ազատել մարդկությունն այնպիսի բաներից, ինչպես անցյալ իմպերիալիստական սպանդանոցը, այն վայրենի հակասություններից, վոր մենք տեսնում ենք կապիտալիստական

աշխարհում այժմ ել, վորտեղ սակավաթիվ, մի բուռը ամենահարուստ պետություններ խեղդվում են իրենց հարստության մեջ, իսկ յերկրագնդի հսկայական բնակչությունը տառապում ե չքավորությունից՝ հնարավորություն չունենալով ոգտվել գյուղացիուն ունեցող կուլտուրայի և հարստության բարիքներից»\*։

Այս ընկեր կենինն ասել ե 1921 թվին։ Հետագայում մեր կուսակցությունն իր վորոշումների մեջ շատ անգամ ե կրկնել բանվորների և գյուղացիների մեջ սերտ միություն կապելու անհրաժեշտությունը։ Յեվ յերբ այժմ մեր հակառակորդների բանակից մենք լսում ենք, թե «յերեսներս գեպի գյուղ» լոգունգով մենք գյուղացիներին փաղաքշում ենք միայն, մենք իրավունք ունենք նրանց պատասխանելու, վոր նրանք լպիրց կերպով ստում են։

\* Լենին, XVIII հատոր։ Զեկուցում Խորհուրդների IX համագումարում։

Ինչպես այդ յերկում եւ ընկեր լե-  
նինի ճառերից բերված վերոհիշյալ  
քաղվածքներից, յուրաքանչյուր մարդ  
կարող ե համոզվել, վոր մեր կուսա-  
կցությունը, լինելով բանվոր գասակար-  
գի կուսակցություն, յերբեք չի մոռա-  
ցել գյուղացիության շահերը:

Աշխատավորության ազատագրման  
համար մղվող մեր կոփվը մենք պատ-  
կերացնում ենք իբրև մի կուռ միու-  
թյուն բանվորների և գյուղացիների  
միջն ուղղված բոլոր տիպի ճնշողնե-  
րի գեմ անկախ այն բանից, նրանք  
ազատամիտի յարլիկ են կրում, թէ  
բացարձակ պահպանողականի:

Այդ միությունն անցյալում ամենա-  
լուրջ փորձությունների բովից ե ան-  
ցել։ Նրան սպասում են ապագայում ել  
ավելի ծանր փորձություններ։ Բայց  
մենք ավելի քան հավատացած ենք,  
վոր յեթե մեր կուսակցությունը միշտ  
յուրաժամանակ և կանոնավոր կերպով  
հաշվի առնի բոլոր այն պրոցեսները,

վոր կծագեն սոցիալիստական շինարարության զարգացման ընթացքում, առ նրանց այնպիսի ուղղությունն, վոր թե բանվորները և թե գյուղացիներն զգան իրենց վիճակի ուղղակի բարելավումը, ապա այդ միությունը կլինի անհաղթելի և մեզ կհասցնի այնպիսի հասարակակարգի, յերբ վերջնականապես վոչչացված կլինինենք դադարագի և գյուղի միջև յեղած հակառակ թյունները:

Յեվ քանի դեռ այդ չկա, խորհրդաւու  
յին իշխանության յուրաքանչյուր նոր  
քայլը պետք ե կըսվի թե քաղաքի և  
թե գյուղի կը բռներով, և յերբ յերկու  
դեպքում ել արդյունքը դրական լինի,  
նա կարող ե ստանալ իր գործնական  
կիրառումը:

Խորհրդային խշանությունը ներկայումս ապրում է ճիշտ այնպիսի շըբջան, յերբ անհրաժեշտ է տնտեսական զարգացման բնագավառում ավելի արագ ընթանալ, բայց մինչեւ այժմ՝ Յեվ

այդ անհրաժեշտ ե անել ամենից առաջ գյուղատնտեսության վերաբերմամբ։ Բնական ե, վոր անհրաժեշտ ե ավելի մեծ ուշադրություն նվիրել գյուղական խնդիրներին, շուռ գալ «յերեսով դեպի գյուղ»։

Ի՞նչ ե նշանակում «յերեսներս դեպի գյուղը» լոգունգը։

Այդ նույն բանն ե, ինչ վոր բանսվորների և գյուղացիների միությունը, կամ ինչ վոր մենք հասարակ ձեռվ կոչում ենք միացում։ «Յերեսներս դեպի գյուղ» լոգունգն ընդգծում է միայն, վոր ներկայումս գյուղում, ընդհանուր գյուղատնտեսության աճման և մասնավոր ապրանքային հարաբերությունների հիման վրա, գյուղացիության մեջ տեղի յեն ունենում նոր պրոցեսներ։

Մեր կուսակցությունն ու բանվոր դասակարգը պետք ե ուշադրությամբ հետևեն, զննեն այդ պրոցեսները, դառնան «յերեսներով դեպի գյուղ», վորպեսզի բանվորների և գյուղացինե-

րի միությունը նաև այս անցման շրջանում ամբողջությամբ ու լիովին պահպանի իր առաջգա ուժը։

Վորոնք են այն նոր փոփոխությունները, վոր տեղի յեն ունենում գյուղում։

Վերջին յերեք տարիների ընթացքում գյուղատնտեսությունն անընդհատ վերականգնվում է։ Բավական ե ցույց տալ միայն միքանի թվեր, վորպեսզի այդ բանը բոլորովին պարզ լինի։

Ցանքսի տարածության վերաբերյալ մենք ունենք հետեւյալ աճումը։

Խ. Ա. Հ. Միության ցանքսի տարածությունը 1916—24 թվերին, հոգար գեսիատիններով կ  $\frac{0}{0} / \frac{0}{0}$ -ով։

Աշնանա- Գարնանա- Ամ-  
ցան  $\frac{0}{0} / \frac{0}{0}$  ցան  $\frac{0}{0} / \frac{0}{0}$  բողջը  $\frac{0}{0} / \frac{0}{0}$   
1916 թ.

27,337,7 100 59,545,2 100 87,382,9 100  
1923 թ.

26,525,3 95 44,335,7 74,5 70,861,0 81  
1924 թ.

28,158,9 101,3 49,082,8 82,1 87,241,7 88,4

Համարյա նույնպիսի թվեր մենք ու-  
նենք նաև անասունների աճման վե-  
րաբերյալ:

Խ. Ս. Հ. Միության անասունների  
թիվը 1916—24 թվերին, հազարական  
գլուխներով ու տոկոսներով.

Զիեր	<sup>0/0/0</sup>	Խոշոր յեղիբալոր	<sup>0/0/0</sup>
		անասուններ	

1916 թ.

31,542,8	100	50,074,6	100
----------	-----	----------	-----

1923 թ.

21,408,1	67,9	41,268,6	82,4
----------	------	----------	------

1924 թ.

22,878,0	72,5	47,596,8	95
----------	------	----------	----

Այս յերկու աղյուսակները ցույց են  
տալիս, վոր գյուղատնտեսության ընդ-  
հանուր դրությունը տարեցարի լա-  
վանում ե, և մենք արդեն ինչպես  
ցանքսի տարածության, այնպես ել ա-  
նասունների տեսակետից համել ենք  
1916 թվի դրության համարյա 88<sup>0/0</sup>-ին:

Զեռք բերած հաջողությունների վրա  
մենք վոչ մի գեպքում կանդ առնել  
չենք կարող: Ընդհակառակը, տարեց-

տարի մենք ավելի ևս պիտի լարենք  
մեր ուժերը, վորպեսզի գյուղատնտե-  
սության զարգացումն ավելի արագ  
թափով առաջ ընթանա: Մեզ անհրա-  
ժեշտ ե խաղաղ ժամանակվա դրու-  
թյունից շատ առաջ անցնել, վորովհե-  
տեւ մենք գիտենք, վոր գյուղացիու-  
թյունն այն ժամանակ ել կիսաքաղց  
վիճակ եր ապրում: Իսկ մենք ցանկա-  
նում ենք, վոր գյուղացիությունն ա-  
վելի հարուստ լինի, քան եր միապե-  
տության ժամանակ:

Սակայն գյուղական բոլոր տնտեսու-  
թյուններն ել միենույն արագությամբ  
չեն վերականգնվում: Միքանիսը շատ  
արագ են աճում, մյոււները՝ ավելի  
դանդաղ, յերբորդներն ել, ընդհակա-  
ռակը, ավելի և ավելի յեն բայթայվում:  
Ուրիշ խոսքով՝ գյուղում տեղի յե-  
նենում դասակարգային շերտափորում.  
մի ծայրում առաջ ե գալիս հարուստ  
գյուղացիների մի խումբ (կուլակներ),  
մի խումբ, վորը բանվորական ուժեր

վարձելու, հողի վարձակալությամբ,  
ստրկական պայմաններով փոխատվա-  
կան գործարքներով և այլ ճանապարհ-  
ներով պլոկում ե գյուղացիության տ-  
վելի աղքատ շերտերին: Ներկայումս  
գյուղերում գեռ այնքան ել արագ չի  
կատարվում այդ պրոցեսը: Կուլակնե-  
րի անտեսությունները քանակությամբ  
գեռ շատ քիչ են, բայց և այնպես, մեր  
կուսակցությունն այդ յերեսույթի կող-  
քով չի կարող անտարերերությամբ ան-  
ցնել և պետք ե այժմ ևեթ ձեռք առնի  
բոլոր հարկ յեղած միջոցները:

Գյուղական տնտեսությունների բա-  
րեկեցության աճման և գյուղի դասա-  
կարգային շերտավորման հետևանքով  
տեղի յեռնենում յերկրորդ յերեսույթը—  
գյուղացիությունը մեծ ակտիվություն  
և ցուցաբերում իր հասարակական  
և ընդհանուր պետական հարցերի լուծ-  
ման ժամանակ: Գյուղացին այլես չի  
բավականանում միայն իր տնտեսու-  
թյան մեջ աշխատելով, նա ուզում է

գործնական հասարակական աշխա-  
տանքներում իր մասնակցությու-  
նը հայտնաբերել:

Հասկանալի յե, վոր ամբողջ գյուղա-  
ցիական մասսաննույն ակտիվությունը  
չի ցուցաբերում: Գյուղացիությունից  
ջոկում ե ավելի առաջավոր շերտը,  
կամ, ինչպես մենք այժմ նրան անվա-  
նում ենք, գյուղական ակտիվը, վորը  
հանդիսանում ե գյուղական մասսաների  
կարծիքների և տրամադրությունների  
արտահայտիչը:

Մեր կուսակցությունը, վորպես  
բանվոր դասակարգի և գյուղացիության  
ղեկավար, հատկապես ավելի ուշադրու-  
թյամբ պետք ե վերաբերվի դեպի այդ  
առաջավոր գյուղացիները, քանի վոր  
նրանք արտահայտում են ամբողջ մաս-  
սայի տրամադրությունը:

Մեր կուսակցությունը պիտի աշխա-  
տի առաջ քաշել գյուղական ակտիվի  
այն մասը, վորն ավելի մոտ ե կան-  
ցնած մեր կուսակցությանն ու խորհր-

դային իշխանությանը։ Այգպիսի ակտիվ հանդիսանում են գյուղական չքափորներն ու միջակները։

Գյուղի ժամանակակից պայմաններում մենք հաճախ նկատում ենք, վորունեար գյուղացիությունն ավելի յեակտիվ, քան չքափորներն ու միջակները։ Դա միանգամայն բնական ե, քանի վորունեար մասը սովորաբար լրագրներ ե ստանում և նրանց միջոցով ծանոթանում մեր գեկրետներին։ Նա ավելի ազատ ե և ավելի մեծ ուշադրություն կարող ե նվիրել հասարակական գործերին։ Նա վորպես հարուստ, ավելի յե կապված քաղաքի հետ, վորտեղից տեղեկություններ ե քաղում խորհրդային իշխանության շինարարության մասին։

Հասկանալի յե, վոր այդ ունեար մասը չի կարող ամբողջ գյուղական մասսայի իրական ցանկությունների արտահայտիչը լինել։ Սակայն, քանի վոր մյուս մասը (չքափորները և միջակնե-

րը) չունի իր առաջնորդները, նա կարող ե գյուղի ամբողջ հասարակական կյանքի ղեկավարը դառնալ և տանել իր յետեից ամբողջ գյուղական մասսան։

Հենց այստեղից ել առաջ ե գալիս մեր կուսակցության առաջին և հերթական խնդիրը՝ ոգնել չքափորներին և միջակներին ստեղծելու իրենց ակտիվը, վորը պարզ հասկանար չքափորների ու միջակների և գյուղական վաշխառուների շահերի հակասությունը, վորը պարզ գիտակցեր, թե գյուղացիության բարեկեցությունը մեծապես կախված ե բանվորների և գյուղացիների միջև յեղած կապի ուժեղությունից։ Գյուղում, անկասկած, կարելի յե առաջքաշել այդպիսի ակտիվ մոտ ժամանակում։ Իմպերիալիստական և քաղաքացիական կոիվների ընթացքում գյուղացիներից շատերն անցել են ամենալավ հասարակական դպրոցը։ Նրանք տեսել են՝ ինչպես են ապրում մարդիկ տարբեր վայրերում, ծանոթացել են

բաղաքի կյանքին, բաղաքացիական  
կոփսերի ըրջանում նրանցից շատերը  
յեղել են հրամանատարներ և ձեռք են  
բերել ամենորյա վարչական և տնտե-  
սական փորձ: Կովից հետո նրանք վե-  
րադարձել են իրենց քայլայված տըն-  
տեսությունը, հեռացել են հասարա-  
կական աշխատանքներից և մինչև տ-  
կանջները թաղվել են իրենց տնտեսու-  
թյունը վերականգնելու աշխատանքնե-  
րի մեջ: Այժմ նորից հնարավոր և  
այդ տարրը հաղորդակից անել հասա-  
րակական կյանքին այնպես, վոր նա  
դառնա գյուղական չքավորների և մի-  
ջակների իրական առաջնորդը:

Բայց դրա վրայել մենք չենք կարող  
կանգ առնել: Զքավորների և միջակ-  
ների այդ ակտիվը միայն այն ժամա-  
նակ ամբողջությամբ կատարի իր պատ-  
մական գերը, յերբ վոր կկարողանա  
կանոնավոր շաղկապել գյուղացիության  
և բանվոր դասակարգի շահերը:

Այստեղից մեր կուսակցության ա-

ռաջ ամբողջությամբ առած կանգնում  
ե մի առաջնակարգ խնդիր՝ սերտորեն  
կազմվել գյուղական լայն մասսաների  
հետ, դառնալ չքավորների և միջակնե-  
րի լիովին ճանաչված ղեկավարը: Իրա-  
կանացնել այդ մենք կարող ենք մի-  
այն այն ժամանակ, յերբ ժամանակա-  
կից գյուղի ամենալավ մասը, վոր իրոք  
նվիրված ե խորհրդային իշխանությա-  
նը, քաշենք մեր կուսակցության շար-  
քերը:

Ո՞ւմից ե բաղկացած գյուղի այդ  
ընտիր մասը, վորին պետք ե քաշել  
մեր կուսակցության շարքերը:

Ամենից առաջ մեր կուսակցությունը  
ոլետք ե իր ուշագրությունը գարձնի  
դյուղի այն ակտիվի վրա, վորն անում  
ե չքավորների և միջակների մեջ, չը-  
կարելով իր կապը գյուղական տնտեսու-  
թյունից: Ավելի պարզ ասած, արորի  
մաճը բռնող այն գյուղացիները, վո-  
րոնք գործոն մասնակցություն են ցույց  
տալիս գյուղի հասարակական գործե-

լուսն և շատ անգամ են գործով ապացուցել իրենց խորհրդային իշխանությանը նվիրված լինելը, հանդիսանում են այն առաջին և վերին աստիճանի կարեոր խավը, վորը պետք ե քաշել մեր կուսակցության շարքերը:

Կուսակցությունն ամենասերտ կերպով պետք ե կապվի գյուղական լայն մասսաների հետ: Գյուղական կոմմունիստը պիտի լինի գյուղի չքափորների և միջակների ճանաչված և հարգված առաջնորդը: Ո՞ւմ ավելի շատ կվստահի գյուղացիական մասսայի այդ շերտը: Իհարկե իր գյուղացուն, վորը նրա կողքին վարում ե իր տնտեսությունը, բայց վորը կարողանում ե վոչ միայն լավ տնտեսատեր լինել այլ և լավ հասրակական գործիչ, և վճռականորեն ու համարձակ պաշտպանում ե նրանց շահերը:

Մեր կուսակցությունը պետք ե կարողանա ջոկել գյուղացիության այդ ընտիր և հավատարիմ մասը, լուրջ

աշխատամնք թափի նրա դաստիարակության վրա և դարձնի նրան մեր կուսակցության խական և անձնուրաց անգամ: Յեթե այդ խնդիրը մեղ հաջողվի իրականացնել մոտիկ ապագայում, անկասկած մեր կուսակցությունը գյուղական լայն մասսաների աշքում ավելի մեծ հեղինակություն և հարգանք ձեռք կբերի, քան այժմ:

Մյուս վոչ պակաս կարեոր շերտը, վորից մեր կուսակցությունն ոգնություն պիտի ստանա, գյուղական կոմյերիտմիությունն ե: Գյուղում կոմյերիտմիությունը շատ արագ թափով ե զարգանում: Նա ձեռք ե բերում գյուղացիության մեջ ավելի և ավելի մեծ հարգանք:

Այն կազմակերպությունը, վորը մոտ անցյալում միայն ծաղրի յեր արժանանում, այժմ դառնում ե, և շատ տեղերում արդեն դարձել ե մի կազմակերպություն, վորն արժանանում ե գյուղական մասսաների ամենալավ

դովասանքներին։ Դրա ամենալավ առաջույց հանդիսանում է այդ կազմակերպության վերին աստիճանի արագ աճումը։

Ներկայումս գյուղում արդեն կամու 600,000 կոմյերիտական։ Մենք վոչ մի կերպ չենք կարող և չպետք ե արգելք հանդիսանանք այդ աճմանը, քանի վոր գյուղական յերիտասարդության ձգտումը դեպի աշխատանք հըսկայական ե։ Բայց մենք պետք ե ապահովենք, վոր կուսակցությունը կոմյերիտմիության մեջ ունենա առողջ, ղեկավարող մի միջուկ։ Ահա, առաջին հերթին այդ կողմը պետք ե դարձնել կուսակցության ուշադրությունը, և այստեղ, պետք ե պարզ ասել, ամենինչ բարեհաջող վիճակի մեջ չե։ Կուսակցական միջուկը կոմյերիտմիության մեջ ամբողջովին կազմում է 8<sup>0</sup>/<sub>0</sub>-ից վոչ ավելին, իսկ գյուղի համեմատությամբ՝ ավելի պակաս, իջնելով միքանի նահանգներում մինչև 1<sup>0</sup>/<sub>0</sub>։ Գյուղի

կոմյերիտական բջիջների ղեկավարող կազմի մեջ մենք նույնպես միշտ կուսակցության անդամ չունենք։ Այսպես, որինակ, կոմյերիտմիության բջիջներ մոտ 27,000 են, և միայն 7,800-ում քարտուղարները կուսակցական են։ Ճիշտ ե, կոմյերիտմիության բջիջների քարտուղարներն այնպիսի տղաներ են, վորոնք հաճախ վոշնչով չեն տարբերվում կուսակցականներից, բայց և այնպես այդպիսի դրությունն աննորմալ ե ուղղումն ե պահանջում։ Կոմյերիտմիության մեջ այժմ արդեն ահազին քանակությամբ տղաներ կան, վորոնք ապրել են կոմյերիտական հասակը, վորոնք վորոշ ժամանակից հետո պետք ե դուրս գան նրանից։ Այդ տղաներն արդեն վարժվել են կազմակերպչական աշխատանքներին և հասարակական կյանքին, նրանք կազմամակերպչական հմտություններ են ձեռք բերել, նրանք այդպիսի աշխատանքների կարիք են զգում։ Դրանց լավագույն մասը

պետք եւ քաշել կուսակցության շարքերը:

Բոլորովին առանց վախենալու, ընդհակառակը, մեծ շահավետությամբ, կարելի յեւ մոտակա ամիսների ընթացքում կուսակցության մեջ առնել 25,000-ից մինչև 30,000 գյուղական կոմյերի տական: Այդ գյուղական հասունացող նոր կարը ապագա գյուղի կյանքում մեծ դեր եւ խաղալու: Խոշոր չափով նրանցից եւ կախված, թէ ինչպիսի գյուղ կունենանք մենք 10-15 տարի հետո: Այդ գյուղը պետք ելինի խորհրդային: Հարկավոր եւ միայն այժմ արդեն լուրջ աշխատանք թափել նրա ապագա դեպավարների վրա:

Գյուղի յերրորդ շերտը, վորի վրա հարկավոր եւ ուշադրություն դարձնել և քաշել նրան կուսակցության մեջ,— կանայք են: Զնայած գյուղական կանանց վերին աստիճանի մոռացված լինելուն, մեր կինքաժինները գյուղում պատգամավորների ժողովների միջոցով,

այնուամենայնիվ, ստեղծեցին կանանց հասարակականության ուժեղ միջուկ: Այն գեղջուկ կինը, վորն ակտիվ մասնակցություն եցույց տալիս հասարակական կյանքին, հանդիսանում եւ խորհրդադային իշխանության և կուսակցության ամենալավ բարեկամը:

Գեղջուկ կինը, մինչև իր ակտիվ հասարակական գործիչ դառնալը, պետք եւ անցնի տղամարդկանց ծաղրի դաժան ուղին, վորոնք չեն կարողանում հաշտվել կնկա (նախա) իշխանության հետ: Այդպիսի կինը պետք եւ ունենա ուժեղ քննավորություն, մեծ վճռականություն և խորը ըմբռնում այն բանի, թէ միայն խորհրդային իշխանության ժամանակ եւ, վոր կանայք իրոք կարող են ազատազրվել ճորտությունից: Վոչ մի կերպ կուսակցությունը չի վտանգվի, յեթե նրանց ամենալավ մասը մտնի կուսակցության մեջ: Նույնիսկ ավելին — մեր կուսակցությունը չի կարող կանանց լիակատար

ազատագրման իր խնդիրը իրականացնել, յեթե գյուղական կանանց աճող ակտիվի ամենալավ մասը կուսակցության շարքերը չգրավվի:

Չորրորդ և առաջին յերեքից վոչ պակաս կարեոր շերտը, վորին պետք եքաշել մեր կուսակցության շարքերը՝ բատրակներն են,

Գյուղի դասակարգային շերտավորումը խորանում ե. դրա հետեանքով գյուղում պետք ե առաջ գա բատրակների քիչ-շատ ուժեղ կադր: Այդ գյուղատնտեսական բանվորների դասակարգային վիճակը շատ մոտ եքաղաքի պրոետարիատին, և, անկասկած, նրա շահերն ել միևնույնն են, ինչ վոր պրոետարիատինը: Մինչև այժմ բատրակները գյուղում շատ աննշան դեր ելին խաղում, վորովհետև ցարական ինքնակալությունը նրանց խավարի մեջ եր պահում. նրանց քաղաքի բանվորներից ավելի ելին շահագործում, և, շնորհիվ իրենց ցրվածության և անգի-

տակից լինելուն, նրանք չեն կազմակերպվել արհեստակցական միությունների մեջ:

Ներկայումս այդ շերտն արգեն համախմբվում ե արհմիությունների շուրջը: Այնտեղ նա հնարավորություն ունի զգալիորեն բարձրացնել իր կուլտուրական մակարդակը, և նրա դերը գյուղում տարեցտարի պիտի մեծանա: Նրանց ընտիր մասը պետք ե մտնի մեր կուսակցության շարքերը: Գյուղի այդ շերտի համար կուսակցության մեջ մտնելու պայմանները կարելի յե զգալիորեն թեթևացնել:

Վերջապես գյուղի հինգերորդ շերտը, վորից մեր կուսակցությունը, ճիշտ ե, քիչ բանակությամբ, ուժեր ե քաղում, հանդիսանում են ուսուցիչները, բժիշկները, գյուղատնտեսները և այլն:

Ինտելիգենցիայի, և հատկապես գյուղական ուսուցչության մեջ, վերջին ժամանակներս անկասկածելիորեն առաջ ե յեկել նոր բեկում: Խորհրդա-

յին իշխանությանը համակերպվողներից նրանք դառնում են ուղղակի մեր կուսակցության աշխատակցությունը փնտողներ։ Ուսուցիչների համամիութենական համագումարում այդ տրամադրությունն առանձին ուժգնությամբ ընդգծվեց։ Այսպիսի պարագաներում միանգամայն պարզ եւ, վոր մեր կուսակցությունը պիտի միջոցներ ձեռք առնի, վորպեսզի ուսուցչության փոքրագույն, բայց իրոք լավագույն մասը, վորը հասարակական աշխատանքներում ակտիվ մասնակցություն եւ ցուցաբերում, նրա շարքերը գրավվի։

Ուսուցի ակտիվություն ասելով չպետք եւ հասկանալ միայն նրա ներկայացումներ, խմբերգային և յերաժշտական խմբակներ կազմակերպելու աշխատանքները, այլ կոռպերացիայի, գյուղկոմների, գյուղխորհուրդների և այլ շինարարական լուրջ աշխատանքների ժամանակ նրա ցուցաբերած մասնակցությունը։ Մեր կուսակցությանը

լուրջ ոգուտ կարող եւ բերել միայն այնպիսի ուսուցիչը, վորը գյուղացիության մեջ հեղինակություն ունի և վայելում եւ նրա հարգանքն ու միաժամանակ ուսուցչական շրջանում հմուտ մանկավարժ եւ։ Գյուղում հետզհետեստեղծվում եւ ուսուցչական այդպիսի շերտ, հատկապես յերիտասարդ, խորհրդագյին ուսուցիչներից։ և նրա ընտիր, ավելի նվիրված մասը կարելի յերավել կուսակցության շարքերը։

Մեր բջիջները միքիչ ավելի զգուշ պետք եւ վերաբերվեն գյուղական կազմակերպություններին ոժանդակող տեխնիկական պերսոնալի կուսակցության մեջ ընդունելու խնդրին, քան մինչև այժմ եր։ Այդ տարրն ընդհանուրապես շատ եւ կապված գյուղական բջիջների անդամների հետ, և նրա համար շատ ավելի հեշտ ելնելու կուսակցության մեջ, բայց նրա տված ոգուտն ամենից քիչ եւ։ Սովորաբար գյուղի այդ ծառայող տարրը կտրված եւ գյու-

ղական մասսայից, վերեկից եւ նայում  
նրա վրա և վոչ մի դեպքում չի կալ ող  
դառնալ զյուղական լայն մասսաների  
հետ շաղկապող տարր։ Մինչդեռ, մին-  
չև վերջին ժամանակները, այդ տարրը  
գյուղացու անվան տակ բավականին  
մեծ քանակությամբ թափանցում ե  
մեր կուսակցության շարքերը։ Այդ  
պատճառով գյուղական բջիջները գյու-  
ղի այդ շերտը կուսակցության շար-  
քերն ընդունելիս պետք եւ ավելի  
քննադատորեն վերաբերվեն, քան մին-  
չև այժմ։

Վերոհիշյալ խնդիրները միայն այն  
ժամանակ կիրականանան, յերբ զգա-  
լիորեն կհեշտանա կուսակցության մեջ  
մտնել ցանկացող գյուղացիների ըն-  
դունելությունը։ Գյուղում հարկավոր  
քանակությամբ հանձնարարություններ  
գտնեն այնքան ել հեշտ չի։ Այդ պատ-  
ճառով XIV կուսակցությունը վո-  
րոշում եւ ընդունված, ըստ վորի կու-  
սակցության մեջ մտնող գյուղացինե-

րից պահանջվելու յեւ միայն յերկու  
հանձնարարություն, յերկուական տար-  
վա ստաժով։ Գյուղում այդ ել շատ  
անգամ դժվար է ճարել քանի վոր հա-  
ճախ միքանի գյուղին ընկնում եւ մի  
բջիջ, յերբեմն ել նույնիսկ ամբողջ  
շրջանին մի բջիջ։ Այդպիսի պարագա-  
ներում հանձնարարություններ գտնելը  
վերին աստիճանի դժվար է։ Կուսակցա-  
կան կոնֆերենցիան դրանից յելնելով՝  
վորոշել եւ. «Պարտավորեցնել տեղա-  
կան ղեկավարող կազմակերպություն-  
ներին գյուղում, վորպեսզի վորտեղ  
գյուղացիների և բարորակների մեծ հո-  
սանք կա դեպի կուսակցությունը, բայց  
չկան հանձնարարության իրավունք ու-  
նեցող կուսակցականներ, այնտեղ գործ-  
ուղեն կուսակցական աշխատողներ՝ ծա-  
նոթանալու կուսակցության մեջ մտնել  
ցանկացող գյուղացիների հետ և հարկ  
յեղած դեպքում նրանց անհրաժեշտ  
կուսակցական հանձնարարությունները  
տալու»։

Այսպիսով կուսակցությունն ստեղծել ե բավական բարենպաստ պայմաններ, վորպեսզի գյուղացիության լավագույն մասը կարողանա մտնել իր շարքերը։ Տեղական գյուղը ջները պետք ե ամեն ջանք գործ դնեն, վորպեսզի ի կատար ածեն այդ խնդիրները։ Անհրաժեշտ ե հատուկ ուշադրություն դարձնել կուսակցության մեջ մտնել ցանկացողների խնդիրն ավելի շուտ կատարելու վրա։ Դիմում տալու որից մինչև վերջնականապես հաստատելը կամ մերժելը յերկու ամսից ավելի չպետք ե տեի։

Խոսելով կուսակցության մեջ ավելի շատ գյուղացիներ ընդունելու մասին, քան մինչև այժմ եր, մենք, սակայն, չպետք ե մոռանանք, վոր մեր կուսակցությունը բանվոր դասակարգի կուսակցություն ե և անցել ե անասելի ծանր փորձությունների բովից, վոր նրա պրոլետարական միջուկը բաղկացած ե յեղել իսկապես բանվորու-

թյան լավագույն, տոկուն ուժերից։ Մեր կուսակցության մեջ զյուղացիներ ընդունելու ժամանակ մենք պետք ե լավ հիշենք, վոր մեր կուսակցության դռները բաց են միայն նրանց համար, վորոնք իսկապես գործով պատրաստ են պաշտպանելու բանվոր դասակարգի և գյուղացիության շահերը, վորոնք իրենց պարզ հաշիվ են տալիս, վոր մեր կուսակցությունն ստիպված պիտի լինի դիմանալ դեռ շատ ծանր փորձությունների։

Մենք գյուղացիներին կուսակցության մեջ ընդունելու համար վոչ մի հատուկ կամպանիա չենք անցկացնում։ Մենք ընտրում ենք միայն գյուղացիության այն իսկապես լավ մասը, վորն անկամակածելիորեն նվիրված ե կուսակցության շահերին և խորհրդային իշխանությանը։

Այդ պատճառով անհրաժեշտ ե, վոր մեր գյուղական կազմակերպությունները չընկնեն արտաքին ձևի յետևից,

այլ գյուղացիներին կուսակցության շարքերը գրավելու գործով զբաղվեն ամենայն լրջությամբ։

Գյուղական միջավայրում առաջավոր կոմմունիստներ ստեղծելու աշխատանքների հետ միաժամանակ անհրաժեշտ ե կուսակցական գործիչներ շպրտել քաղաքից գյուղ։

Յեթե այդ շպրտելու վրա մինչև վերջին ժամանակներս հարկավոր ուշադրությունը չի դարձվել, ապա այժմ այստեղ պետք ե ցուցաբերել մեծ զգուշություն։ Գյուղին պետք ե տալ այնպիսի կոմմունիստ, վորը նախ իրոք թարմացնող մթնոլորտ կարող ե մտցնել գյուղական բջիջի ամբողջ աշխատանքի մեջ, և յերկրորդ, համաձայն կլինի աշխատել գյուղում յերկար ժամանակ, վորպեսզի գյուղացիները չնայեն նրա վրա իբրև «ոտարի», այլ իբրև մշտական աշխատավորի, վորը պատասխանատու յե գյուղացիության առաջ գյուղում կատարած իր ամբողջ

հասարակական աշխատանքների համար։

Այդպիսի ուժեղ կաղը մենք կարող ենք ստեղծել ամենից առաջ այն ընկերությունը, վորոնք գյուղ են գնում աշխատելու կամավոր կերպով՝ գիտակցելով այն մեծ պատասխանատվությունը, վորը նրանց վրա յե դրվում։ Այն կոմմունիստը, վորը համաձայնում ե գյուղ զնալ այն պայմանով, վոր վեց ամսից կամ մի տարուց հետո անպատճառ յետ կանչվի, կուսակցական աշխատանքների բարելավման գործի տեսակետից վոչ մի զգալի ոգուտ չի կարող բերել։ Քաղաքի կազմակերպությունների անելիքը կայանալու յե նրանում, վոր գյուղի համար կամավորներ հավաքեն։ Հասկանալի յե, վոր ամեն մի կամավոր չի կարող գյուղ ուղարկվել։ Կուսակցական որգաններն այդ տեսակետից պետք ե ցուցաբերեն ամենամեծ զգուշություն։ Գյուղն ամենից առաջ կարիք ունի քաղաքից յեկած այնպիսի կամավորի, վորն իրոք կմտցն ի աշխատանքի

մեջ թարմ հոսանք, կկարողանա մոտենալ գյուղացիությանն այնպես, ինչպես ասել ե ընկեր լենինը. «Բոլոր գիտակից բանվորները—Պիտերի, Իվանովու-վազնեսենսկու, Մասկվայի, վորոնք յեղել են գյուղում, բոլորը պատմում եյին այն մասին, թե ինչպես մի շարք, ըստ յերկութին խոշոր թյուրիմացություններ վերացվում, մեղմացվում եյին նրանով, վոր դուրս եյին գալիս խելացի բանվորներ, վորոնք գրքի լեզվով չեյին խոսում, այլ գեղջուկին հասկանալի լեզվով, խոսում եյին վոչ իբրև հրամայողներ, այլ իբրև դրությունը պարզաբանող ընկերներ»\*:

Այդ պատճառով գյուղ ուղարկվող աշխատողները պետք ե յենթարկվեն ամենախիստ ընտրության: Գյուղ ուղարկելուց առաջ պետք ե նրանց բոլորին ծանոթացնել այն գործնական միջոց-

\* Լենին. «Դեպի միջակ գյուղացիությունն ունենալիք վերաբերմունքի մասին».

ների հետ, վոր գործադրվում են կուսակցականների և խորհրդային կազմակերպությունների կողմից: Գյուղյեկող կոմմունիստն անմիջապես պիտի իմանա բոլոր այն կոնկրետ խնդիրները, վոր կանգնած են իր առաջ:

Հատուկ ուշադրություն պիտի դարձնել այն բանի վրա, վոր գյուղ գնացող աշխատողը ծանոթ լինի Հիմնական Որենքներին (Հողային որենսգիրք, Անտառային որենսգիրք, Քաղաքացիական որենսգիրք), նույնպես և վերջին կարեոր դեկրետներին (գյուղատնտեսական հարկի մասին, բանվորական ուժի վարձման մասին և այլն): Յուրաքանչյուր գյուղ յեկող գյուղացիության կողմից յենթարկվում ե փորձության ամենից առաջ այս ասպարիզում, և յեթե նա գյուղում հանդես ե գալիս իբրև որենքների խելացի մեկնաբանող, նա հենց սկզբից արդեն ապահովում ե իր համար մեծ ժողովրդականություն:

Գյուղի համար առաջին հերթին կա-  
մավորներ ընտրելով՝ կուսակցությունը  
չի կարող հրաժարվել նաև մորիլիզա-  
ցիայից։ Գյուղը լավ փորակման մի  
շարք աշխատավորների կարիք ե զգում,  
Յեկ յեթե այդպիսիները չեն ցանկա-  
նում կամավոր կերպով գնալ, կուսա-  
կցությունը չի կարող կանգ առնել մո-  
բիլիզացիայի առաջ։

\* \* \*

Վերևում արդեն մատնանշված ե,  
փոր մեր կուսակցությունը պետք ե  
բոլոր միջոցներով ոգնի գյուղական  
չքավորությանը և միջակներին, փորոնք  
ընդունակ կլինեն պաշտպանել այդ  
շերտի շահերը։ Բայց ի՞նչպես անել այդ։

Գյուղական ակտիվի դաստիարակու-  
թյան համար ամենալավ դպրոցը հան-  
դիսանում ե գործնական մասնակցու-  
թյունը գյուղի հասարակական-տնտե-  
սական կյանքին, և առաջին հերթին  
գյուղխորհրդում աշխատելը։

Բոլոր միջոցներով ոժանդակել զյու-  
ղական չքավորների և միջակների ա-  
ռաջավորներին, վորպեսզի գյուղխոր-  
հուրդներում ևուրիշ հասարակական որ-  
դգաններում իրենց մասնակցությունը  
ցուցաբերեն—ահա մեր կուսակցու-  
թյան ամենահետաձգելի անելիքը։

Մինչև այժմ խորհուրդները տեղե-  
բում գեռ շատ թույլ են աշխատում։  
Նրանք իրենց աշխատանքը չեն կա-  
պում գյուղական լայն մասսաների հետ  
և չեն լուծում գյուղի անմիջական կուլ-  
տուրական և տնտեսական կարիքները։

Կենդանացնել գյուղխորհուրդների  
գործունեյությունը մենք կարող ենք  
այն ժամանակ միայն, յերբ գյուղա-  
կան ավելի լայն մասսաներին մասնա-  
կից կանենք նրանց աշխատանքին և  
նրանց տնտեսական ավելի լայն իրա-  
վունքներ կտանք։

Գյուղխորհրդի աշխատանքը պետք ե  
կառուցվի այն ձեռվ, վոր նա կարո-  
ղանա բավարարել բնակչության կող-

մից հարուցած բոլոր հարցերը։ Սովորաբար ժողովներում, իրենց հասարակական տնտեսական հարցերը լուծելու համար, ընտրվում են ամեն առանձին դեպքում հատուկ լիազորներ, և այսպիսով այն տպավորությունն ե ստացվում, վոր գյուղխորհուրդը միայն վարչական միավոր ե, վորը հարկերն ե հավաքում, տուգանքներ դնում և այլն, բայց չի բավարարում գյուղացիության հարուցած տնտեսական հարցերը։

Մինչդեռ խորհրդային իշխանությունն այնպես ե կառուցված, վոր տեղական խորհուրդները հանդիսանում են ինքնավարության ամենաբարձր մարմինը, վորը պարտավոր ե բավարարել այն հասարակության բոլոր հարցերը, վորին ինքն սպասարկում ե։

Այդ կանոններն ամեն ժամանակ տեղերում չեն իրագործվում. հետեանքն այն ե լինում, վոր գյուղացիությունը կորցնում ե ամեն մի հետաքրքրություն դեպի գյուղխորհուրդի աշխատանքները։

1924 թվի աշնան խորհուրդների ընարությունները ցույց տվին, վոր գյուղացիությունը շատ թույլ մասնակցություն ցույց տվեց նրանց։ Ամենից առաջ նրա համար, վոր նրանք չեյին համարում գյուղխորհուրդը գյուղի շահերն իրոք տնտեսապես պաշտպանող մի կազմակերպություն, և յերկըրդ, վոր ընտրությունների ժամանակ միշտ չի պահպանվում լիակատար ազատություն։ Տեղական կուսակցական բջիջները հնարավոր եյին համարում, առանց հիմնական գյուղացիական մասսայի հետ հարկ յեղած համաձայնեցման դնել իրենց ցուցակները և պնդել իրենց թեկնածուներին անցկացնելու վրա՝ ցուցակներով քվեարկության միջոցով։

Գյուղացիության բողոքներին հարկ յեղած ուշադրությունը չի նվիրվում, և հաճախ ձնշում գործ դնելով ցուցակները փաթաթվում եյին ընտրողների վզին։ Շատ բնական ե, վոր գյու-

Դացիության ավելի ակտիվ մասը բոռքում եր նման ձևերի դեմ, և այնտեղ, վորտեղ տեղի ելին ունեցել նման դեպքեր, ընտրությունները բեկանվում ելին:

1924-1925 թվի ամբողջ ձմեռվա ընթացքում տեղի յեր ունենում գյուղխորհուրդների վերընտրական պայքարը: Այստեղ մենք այժմ նկատում ենք տեղական կուսակցական կազմակերպությունների նոր սխալները: Յեթե աշնանային ընտրությունները տեղի ելին ունենում բջիջի կամ շրջկոմի ճնշման տակ, ապա ձգեռային վերընտրություններում բջիջները յերեան են բերում իրենց լիակատար պասսիվությունն ու շփոթվածությունը:

Գյուղխորհուրդները կենդանացնելու լոգունզը և ցուցակներով ընտրություն կատարելու յեղանակի վերացումը հասկացվում ե այնպես, վոր բջիջը պասսիվ վերաբերմունք պիտի ցույց տա դեպի ընտրությունները:

Մինչդեռ հենց այն պատճառով, վորը ընտրությունների ժամանակ անհրաժեշտ ե համարվել ավելի լայն դեմոկրատական սկզբունքներ պահպանելը՝ բջիջը պետք ե ամենաուշադիր կերպով զբաղվեր նախապատրաստական պայքարով:

Մենք փոխում ենք մեր աշխատանքի միայն մեթոզը, իսկ նրա ներքին բովանդակությունը վհչ մի դեպքում: Յեթե ուզմական կոմմունիզմի շրջանում և անմիջապես նրանից հետո մենք ստիպված եյինք խորհուրդների ընտրությունների ժամանակ հրամայելու, թեկնածուներ փաթաթելու յեղանակը կիրառել, ապա այժմ, յերբ գրությունը գյուղում սուր կերպով փոխվել ե, անհրաժեշտ ե գյուղական հիմնական մասսայի հետ մի ընդհանուր լեզու գտնել:

Կուսակցական բջիջի թեկնածուները պետք ե համապատասխանեն գյուղական չքավորներին և միջակներին, պետք ե ճանաչվեն այդ ամբողջ մասսայի կողմից

իբրև իբենց շահերի իսկական պաշտպանուներ:

Մինչդեռ ժամանակակից գյուղի հաւարակական կյանքում մենք հաճախ նկատում ենք հետեւյալ պարագաները. գյուղացիության ունեոր մասն ունի իր հաստատուն առաջնորդը (կամ միքանիսը), վորի թեկնածությունը նադնում ե յուրաքանչյուր ընտրության ժամանակ, միահամուռ կերպով քվեարկում ե նրա ոգտին և անպայմանորեն վստահում ե նրան: Այդ յերեսույթը մենք ավելի սակավ ենք նկատում գյուղական չքավորների և միջակների մեջ: Նրանց ձայներն ընտրությունների ժամանակ հաճախ բաժանվում են բազմաթիվ թեկնածուների մեջ, այդ պատճառով նրանք տապալվում են, չնայած այն բանին, վոր բացարձակ մեծամասնություն են կազմում: Գյուղական կոմմունիստը դեռ չի դարձել չքավորների և միջակների ամբողջ մասսայի իսկական ղեկավարը: Շատ հաճախ չքա-

վորների աննշան մասն ե միայն հաստատուն և միաբան պաշտպանում կոմմունիստին իբրև իր ղեկավարի: Մեզ անհրաժեշտ ե իսկական գյուղական միջավայրից առաջ քաշել այնպիսի կոմմունիստների, վորոնք կկարողանան հանդիսանալ գյուղական հիմնական մասսայի իսկական, ճանաչված առաջնորդները:

Այդ անելն այնքան ել հեշտ չե: Գյուղական չքավորների և միջակների առաջնորդ դառնալու համար պետք ե գործնական աշխատանքով ապացուցել կուլակների հարձակումներից նրանց շահերը պաշտպանելու իսկական հըմտությունը:

Կարողանում են մեր կոմմունիստները գյուղում այդ անել:

Քիչ դեպքում:

Շատ ավելի հաճախ մենք նկատում ենք այնպիսի դեպքեր, յերբ գյուղական կոմմունիստը պահպանել ե իր մեջ ուղղմական կոմմունիզմի ժամա-

նակաշըջանից դեռ շատ բան և չքավորների ու միջակների շահերը պաշտպանելու ամենալավ միջոցը համարում ե բռնությամբ լռեցնել այն բոլորին, ովքեր քննադատորեն են վերաբերվում դեպի աշխատանքը, ովքեր սիրում են մատնացույց անել այն սխալները, վոր գործում ե խորհրդային իշխանությունը։ Աշխատանքի այդ ձևը հասցնում ե այն հետևանքին, վոր գյուղացիության հիմնական մասսան կազմող միջակները, տեսնելով աներկբայելի սխալները և այն, վոր կոմմունիստները բռնությամբ լռեցնելով ծածկում են այդ սխալները, յենթարկվում են կուլակների չարախոսություններին և ընկնում նրանց ազդեցության տակ։

Հաճախ մենք նկատում ենք տեղական կոմմունիստների աշխատանքների մեջ նաև տարբեր մի յերեսոյթ, յերբ նրանք աշխատում են բոլորովին վերացնել աղքատի, միջակի և կուլակի մեջ յեղած սահմանագիծը՝ ընդհանուր գյու-

դացիական քաղաքականություն վարելով։ Այդպիսի թեքումն առաջնից ավելի պակաս մնասակար չե, քանի վոր նա բոլորովին բաց ե թողնում կուլակի ընչափրությունը, վորն իրեն համարում ե խորհրդային իշխանության ազատաբարը և չքավորներին ծպտալ չի թույլ տալիս (загоняет бедноту в подполье):

Կա չքավորների մի ամբողջ շերտ, վորը հասարակական խնդիրներին բոլորովին չի խառնվում։ Նա նույնիսկ ընդհանուր հասարակական ժողովներին չի գալիս։ Արդյոք մեր գյուղական բջիջներն այդ ուղղությամբ վորեե միջոց ձեռք առնձնում են։ Սովորաբար վճչ։

Ընդհանրապես պետք ե ասել, վոր գյուղբջիջները հարկավոր ուշադրություն չեն դարձնում գյուղական ժողովների վրա։

Ժողովի քննությանը դրվող որակաբար գը շատ քիչ դեպքերում ե նախապես քննության յենթարկվում բջիջում։ Այդ

պատճառով բջիջի անդամները կամ բոլորովին լուսմ են և կամ դուրս են գալիս միմյանց հակասող առաջարկներով։ Մինչդեռ վերջին ժամանակներս ժողովները նորից ահազին նշանակություն ունեն։ Շատ գյուղերում այդպիսի ժողովներ գումարվում են համարյա ամեն շաբաթ։ Այդ ժողովներում սովորաբար կարդացվում են խորհրդային իշխանության ամենակառուր կարգադրությունները, Լավ կլիներ, յեթե բջիջը հանձնարարեր իր առանձին անդամներին, վոր ուշադրությամբ ուսումնասիրեն խորհրդային իշխանության այն հերթական դեկրետները, վոր պետք ե կարդացվեն այդ ժողովում, և գուրս գան իբրև այդ դեկրետի իսկական բովանդակության մեկնաբանողներ, մատնանշելով այն, վոր նանպատակ ունի չքավորների և միջակների շահերի պաշտպանությունը։

Այն ժամանակ չքավորներն ու միջակները կստանային խորհրդային իշ-

խանության կարգադրությունների ճիշտ մեկնաբանությունն ու ճշտորեն կը մբռնեյին այն։ Այն ժամանակ չքավորներն ու միջակները կգնահատեն բջիջի ծառայությունները, և նրա անդամները կկարողանան գյուղացիության այդ ահազին մեծամասնության իսկական դեկավար-առաջնորդները դառնալ։

Գյուղացիական լայն մասսաների կողմից ճանաչված կուսակցական առաջնորդներ ստեղծելու աշխատանքների հետ միաժամանակ անհրաժեշտ եղաղղվել նաև այն բանով, վոր շարունակ նորանոր անկուսակցական գյուղացիների խմբեր գրավեն դեպի խորհուրդների աշխատանքները։

Մեր ությամյա խորհրդային աշխատանքի փորձը ցույց է տալիս, վոր խորհուրդներում ընտրվում են ահազին թվով անկուսակցական գյուղացիներ և բանվորներ, վորոնք խորհուրդներից վերադառնում են իրենց տնտեսությունները կամ իրեն կոմմունիստ

և կամ իբրև խորհրդային իշխանության բարեկամ ու պաշտպան:

Մեր կուսակցությունը վոչ միայն չպիտի վախենա ակտիվ գյուղացիությանը—անկուսակցական միջակներին և չքավորներին ավելի և ավելի խորհրդային աշխատանքի գրավելուց, այլ, ընդհակառակը, պետք ե բոլոր միջոցներով պաշտպանի այդ, նրանց շարունակ ավելի պատասխանատու աշխատանքների մղելով:

Խոսելով խորհուրդների գործունեյությունը կենդանացնելու անհրաժեշտության մասին՝ մենք նկատի ունենք վոչ միայն խորհուրդներն իբրև այդպիսին, այլ միաժամանակ նաև գյուղի մնացած բոլոր հասարակական-տընտեսական կազմակերպությունները: Այդ կազմակերպություններին են պատկանում ամենից առաջ գյուղական փոխադարձ ողնության կոմիտեները և բոլոր տիպի կոռպերացիաները:

Յեզ այս կազմակերպությունների համար ամբողջ խստությամբ պահպանվում են վերոհիշյալ դեմոկրատական բոլոր սկզբունքները՝ ազատ ընտրություն, ընտրված մարմինների լիակատար հաշվետվություն իրենց ընտրողների առաջ և այլն:

Գյուղում կոռպերատիվ աշխատանքը կարող է կանոնավոր զարգանալ միայն այն դեպքում, յերբ այդ աշխատանքին կլծվեն իրոք գյուղացիական լայն մասսաները, վորոնք այդ մասնակցությունից կատանան իրական ոգուտներ:

Այդ նյութական ոգուտները, շատ բնական ե, ամենից առաջ ստանում ե գյուղացիության ունեօր և միջակ մասը, վորը կոռպերացիայի միջոցով կապվում ե շուկայի հետ՝ աշխատելով ավելի բարձր գին ստանալ իր գյուղատնտեսական հում նյութերի համար և վաստակների բաժանման ժամանակ ստանում ե ամենամեծ մասը, վորովհետեւ սովորաբար վաստակը բաժան-

վում ե համապատասխան արած գնում-ների գումարի:

Մեզ համար կարեոր ե կոռպերացիայի գործն այն ձեռվ կառուցել, վոր նա իսկական ոգուտը չքավորներին տա՝ ոգնելով նրան վերականգնելու իր տընտեսությունը: Ամենից առաջ այդ ոգնությունը կարելի յե հասցնել չքավորների համար վարկ բաց թողնելով և հողը միատեղ մշակելու համար կոլեկտիվներ կազմակերպելով:

Տարեցտարի կոռպերացիան ավելի և ավելի կկարողանա իր պատույտի մեջ գրավել գյուղացիության խնայողությունները՝ գյուղացիական ավանդները:

Կոռպերացիայում աշխատանքը պետք ե տարվի այնպիսի ձեռվ, վոր այդ աշխանդներն ամենից առաջ չքավորության վարկավորման վրա գործադրվեն, վորպեսզի նրանց ոգնությամբ կարելի լինի չքավորներին ինչքան կարելի յե շուտ վոտքի կանգնեցնել: Յեթե այդ շարվի, յեթե կոռպերացիան ընկնի կու-

լակների ազդեցության տակ, ապա բոլոր խնայողությունները կարող են գնալ ունենոր գյուղացիների վարկավորմանը, և այդպիսով նրանք իրենց տընտեսական աճմամբ ել ավելի առաջ կանցնեն գյուղացիության հիմնական մասսայից, իսկ ավելի չքավորներին վերջնականապես կճորտացնեն:

Մինչդեռ մեր կուսակցությունը գյուղում վոչ թե դասակարգային հակասությունների խորացման զիծ ե վարում, այլ մասսաների գյուղական տընտեսությունների բարձրացման: Մենք պետք ե առաջ ընթանանք գյուղական տնտեսությունների ամբողջ մասսայով միասին, թույլ չտալով անհատ խոշոր սեփականատեր-կուլակներին խիստ առաջ ընկնել և չքավորներին՝ խիստ յետ ընկնել, ու իրենց յետ ընկնելով կուլակների ստրուկը դառնալ: Անաթե ինչու վերին աստիճանի կարեոր ե շարունակ հոգ տանել, վորպեսզի մեր կուսակցությունն իր ձեռքին պա-

հի զարգացող կոռակերատիվ շարժման  
բարոյական դեկավարությունը, հատ-  
կապես նրա առողջին բնիջներում, Դրան  
կարելի յե համեմ վոչ միայն կոռակե-  
բացիայի դեկավարող մարմիններում  
կոմմունիստների ունեցած անհատա-  
կան մասնակցությամբ, այլ և հոգ տա-  
նելով, վոր այդ դեկավարող մարմին-  
ներում վճռական ձայնը պատկանի այն  
չքավորներին ու միջակներին, վորոնք  
կկարողանան պաշտպանել իրենց շա-  
հերք:

Մեր կուսակցության քաղաքական-  
սությունը գյուղացիության վերաբե-  
րյալ հանգում ե այն բանին, վոր ող-  
նություն ցույց տրվի բոլոր գյուղա-  
կան տնտեսություններին իրենց վե-  
րելքի ճանապարհին։ Սակայն անկաս-  
կած ե, վոր մոտակա ժամանակաշրջա-  
նում դասակարգային շերտավորումը  
գյուղում, այնուամենայնիվ, աճելու յեւ-  
Այսպիսի պարագաներում հատկապես  
կարեոր ե, վորպեսզի յուրաքանչյուր

գյուղական կոմմունիստ կարողանա  
պարզ պատճենահան տալ հետեւյալ յեր-  
կու հարցին.

1) Խօնչ ե կուլակը, միջակը և չքա-  
վորը.

2) Ի՞նչպիսի վերաբերմունք ունի կու-  
սակցությունը դեպի այդ կատեգորիա  
ներից ամեն մեկը:

Կանգ առնենք ամենից առաջ առաջ  
ջին հարցի վրա։ Կուլակի, միջակի, և  
չքավորի խնդիրը մեր մամուլում մեծ  
վիճաբանությունների առիթ ե տվել, և  
կարելի յե ասել, վոր այդ հարցի վե-  
րաբերյալ արդեն ավելի կամ պակաս  
լրիվ միաբանություն կա։ Ամենից ա-  
ռաջ յուրաքանչյուրի համար պարզ պի-  
տի լինի, վոր անասունների, ցանքսի  
և գյուղատնտեսական սերենաների քա-  
նակն ու այլ արտաքինն նշանները բա-  
վական չեն կուլակի վորոշման համար։  
Գյուղական այն տնտեսություններն են  
կուլակային, վորոնք ապրում և գարգա-  
նում են վոչ միայն իրենց տնտեսու-

Թյան ուժերով, այլև միաժամանակ շահագործում են ուրիշներին՝ բանվորական ուժեր վարձելով, վորապեսզի նրանց աշխատանքից վաստակ քաղեն, կապալով հող վերցնելով, իրենց հացի պվեցուկն ստրկական պայմաններով ուրիշներին փոխ տալով, գյուղատնտեսական հում նյութ գնելով և վաճառելով՝ ոգտագործելով գների անկման դժանները, և այլ միջոցներով։

Մի խոսքով կուլակն այն հարուստ գյուղական տնտեսությունն ե, վորն այս կամ այն հիմունքներով շահագործում ե ուրիշ տնտեսություն կամ առանձին անձերի։

Սակայն վարձու աշխատանքը դեռ միշտ նշան չի տվյալ տնտեսության կուլակային լինելուն։ Շատ հաճախ գյուղական տնտեսությունների մեջ մենք ականատես ենք այնպիսի դեպքերի, յերբ միջակը, ու նույնիսկ չքավորն ստիպված ե լինում բանվորական ուժ վարձել։ Ծանր աշխատանքների

ժամանակ, յերբ ամբողջ հացահատիկ-ները միանգամից հասնում են դաշտում, միշտ հնարավոր չի լինում սեփական տնտեսության ուժերով ժամանակին հավաքել այն, և, հետեաբար, անհրաժեշտ ե լինում բանվոր ուժեր վարձելու միջոցին դիմել։ Յերբեմն տնտեսությունը ժամանակավորապես թուլանում ե՝ աշխատավորներին բանակ կանչելու, աղջիկը մարդու տալու և այլ հետեանքներով։ այդպիսի դեպքում ել նա ստիպված ե դիմել ուրիշ աշխատող վարձելու միջոցին։ Կարելի յե արդյոք այդպիսի բանվոր վարձելը հաշվել տնտեսության կուլակային լինելու նշան։ Վա՞չ։

Ընկեր Լենինը սոցիալիստ հեղափոխականների հետ ունեցած իր վեճերի ժամանակ շատ անգամ ե ապացուցել, վոր կտակիտալիստական հարաբերությունների տիրապետության ժամանակ «աշխատավոր» գյուղացի քաղցրիկ բառը միայն խորտակում ե բան-

վորին: 1913 թվին ընկեր Լենինը  
«Պարոն բուրժուան աշխատավոր հողա-  
գործության մասին» հոդվածում գրում  
եւ. «Յերկրորդ խումբը միջակ գյուղա-  
ցիական տնտեսություններն են: Ինչպես  
մենք տեսանք, նրանցից բավական շա-  
տերն են վարձու բանվորներին շահա-  
գործում: Միջակ գյուղացին, դա մանը  
բուրժուան եւ, վորը տատանվում ել պրո-  
լետարիատի և բուրժուազիայի միջև»:

Յեթե բանվորական ուժի ամեն  
մի վարձում ամպայմանորեն կուլակու-  
թյան նշան չե, ապա պատահում ե  
նաև հակառակը, այսինքն, կուլակ կա-  
րող ել լինել նաև նա, ով վարձու բան-  
վորներ չի ունենում:

Կուլակ ե այն խոշոր գյուղացին,  
վորն իր տնտեսությունը վարում ե իր  
մեծ ընտանիքի ուժերով, բայց միաժա-  
մանակ զբաղվում ե գյուղական վաշ-  
խառությամբ՝ չքավորներից գների ըն-  
կած ժամանակ գյուղատնտեսական հում  
նյութերի գնման և գների արհեստա-

կան բարձրացման նպատակով պահեստ-  
ներում պահելու միջոցով: Կամ նույն-  
պիսի մի գյուղացի, վոր փոխ ե տա-  
լիս չքավորին իր ավելցուկը նրան ստըր-  
կացնելու նախատակով, նույնպես հա-  
րստանում ե վհչ մաքուր ճանապարհով  
և պետք ե հաշվի կուլակների կատե-  
գորիայի մեջ: Հետևաբար, կուլակը  
վորոշվում ե վոչ թե նրանով, վոր նա  
յերեք ձի և յերկու կով չունի, այլ հինգ  
ձի և վեց կով, այլ հենց իր տնտեսու-  
թյունը շահագործական յեղանակով վա-  
րելով:

Գյուղացիական միջակ տնտեսու-  
թյունը տատանվում ե չքավորի և ու-  
ների միջև: Զարգացող կապիտա-  
լիստական նորմալ հարաբերություն-  
ների ժամանակ միջակների փոքր մասին  
ե միայն հաջողվում հարստանալ և կու-  
լակների կատեգորիայի մեջ մտնել, իսկ  
միջակ գյուղացիության ահագին մեծա-  
մասնությունը հետզհետե քայլայվում  
ե և ընկնում չքավորների կատեգորիա-

յի մեջ։ Այստեղից հետեւմ ե, վոր միջակների շահերն ավելի մոտ են չքափորների շահերին, քան կուլակների։ Հենց այստեղից ել բգլսում ե միջակների և չքավորների մեջ միություն պահպանելու անհրաժեշտությունը։

Պետք ե չքավորների կատեզորիայից մեջ հաշվել գյուղացիության այն մասը, վորի բերքը հազիվ ե բավականացնում իր տնտեսությունը պահպանելուն և ընտանիքը կերակրելուն։ Նրանք սովորաբար ստիպված են լինում վարձով աշխատել կամ զբաղվել կողմնակի արհեստներով, տնայնադործությամբ և այլն։

Գյուղական տնտեսությունների այդ կատեզորիան ներկայումս կազմում է գյուղի մեծամասնությունը։

Յես արդեն ասացի, վոր արտաքին նշանների հիման վրա դժվար է վորոշել վերոհիշյալ յերեք խմբակներից ամեն մեկի դաստիարակալին եյությունը։ Սակայն յերբ մենք այդ նշանները վեր-

ցընում ենք իր մասսայով միլիոնավոր տնտեսությունների վերաբերմամբ և գիտենք տնտեսությունը վարելու ընդհանուր բնույթը, ապա արտաքին նշանները՝ ցանքսի, անասունների և ինվենտարի քանակը կարող են ավելի կամ պակաս չափով պարզ պատկերացնում տալ այն մասին, թե վոր կատեզորիայի տնտեսության պետք ե վերագրել նրանց։

Համառոտ կերպով ըննենք այստեղ ամբողջ Խ. Ս. Հ. Միության գյուղական տնտեսությունների խմբավորումն ըստ յերեք հիմնական նշանի՝ ըստ ցանքսի, կովերի և լծկան անասունների քանակի։

Գյուղական տնտեսությունների խըմբավորման ժամանակ մենք կհետևենք այն բաժանմանը, վորն իր ժամանակին ընդունել ե ընկեր կենինը։

Չքավորների կատեզորիայի մեջ կդընենք այն գյուղացիներին, վորոնք բոլորովին անասուն չունեն, և նրանց կեսը, ովքեր ունեն միայն մի ձի։ Այդ

խումբը կազմում ե բոլոր գյուղական տնտեսությունների մոտ  $60\cdot65^0/_0$ -ը:

Միջակների կատեգորիայի մեջ կդնենք մի ձի ունեցողների մյուս կեսը և յեր կու ձի ունեցողներին: Նրանք կազմում են  $32\cdot35^0/_0$ -ը:

Կուլակների կատեգորիայի մեջ կը մտնեն նրանք, ովքեր ունեն յերեք և ավելի ձի: Սրանք կազմում են ընդամենը մոտ  $1^0/_0$ :

Կրկնում եմ, վոր այդ բաժանումը վերին աստիճանի պայմանական ե, և այստեղ վերցրած ե ամբողջ Խ. Ս. Հ. Միությունն իրեն մի ամբողջություն: Միանգամայն հասկանալի յե, վոր հարավի համար, Սիբիրի համար այսպիսի բաժանումն ըստ ձիերի անընդունելի յե, քանի վոր տնտեսությունը վարելու յեղանակն այնպես ե, վոր պահանջում ե մեծ քանակությամբ լծկան անասունների գործածություն, և այնտեղ յերկու, ոռույնիսկ յերեք ձի ունեցողը հաճախ չքավոր ե: Յես այս պատահա-

կան բաժանումը վերցրել եմ միայն նրա համար, վորովհետև նա համեմատաբար ավելի ձիշտ ե արտահայտում ամբողջ Խ. Ս. Հ. Մամակակից գյուղի դասակարգային բովանդակությունը:

Յեթե մենք դիմենք մի ուրիշ արտաքին նշանի՝ կովի քանակին, և վերցնենք նույն պայմանական բաժանումը, ինչ վերցրինք ձիերի ժամանակ, ապա կըստանանք՝

$\text{չքավորներ} - 50\cdot55^0/_0$

$\text{միջակներ} - 40\cdot45^0/_0$

$\text{կուլակներ} - 1\cdot1^1/2^0/_0$

Դիմենք, վերջապես, յերրորդ նշանին՝ ցանքսին: Այստեղ մենք ավելի զգուշորեն ենք կատարում խմբագրումը և չքավորների կատեգորիայի մեջ ենք մտցնում բոլոր նրանց, ովքեր ունեն իրենց տնտեսության մեջ 4 դեսիատինից պակաս ցանքս: Այդ խումբը կազմում ե բոլոր գյուղական տնտեսությունների մոտ  $55\cdot60^0/_0$ -ը: Յերկրորդ՝ միջակների

կատեգորիայի մեջ ենք դնում նրանց,  
վորոնք իրենց տնտեսության մեջ 4-ից  
մինչև 10 դեսիատին ցանքս ունեն.  
սրանք կազմում են 35-40<sup>0</sup>/<sub>0</sub>-ը:

Յերրորդ կատեգորիայի մեջ են մտնում  
բոլոր 10 դեսիատինից ավելի ցանքս ու-  
նեցողները, վոր կազմում են բոլոր գյու-  
ղական տնտեսությունների 1-3<sup>0</sup>/<sub>0</sub>-ը:

Այսպիսով, համաձայն գյուղական տըն-  
տեսությունների հզորությունը վարոշող  
բոլոր յերեք արտաքին հիմնական նշան-  
ների, չքավորները կազմում են մեծա-  
մասնություն։ Միջակները կարեսը  
խումբ են կազմում, և զլիսավորապես նրա  
վրայե հիմնված գյուղական արտադրան-  
քը։ Կուլակները քանակի տեսակետից  
շատ փոքրիկ խումբ են կազմում։

Այս թվերն անմիջապես պատասխա-  
նում են նաև մեր վերել դրած յեր-  
կրորդ հարցին, թե ինչ վերաբերմունք  
ունի կուսակցությունը դեպի վերոհի-  
շյալ խմբերից յուրաքանչյուրը։

Առաջին խումբը՝ չքավորները՝ իրենց

մեծամասնությամբ պրոլետարներ են։  
Ընկեր Լենինը գրում եր. «Զիազուրկ  
գյուղացին անպիսի մեկն ե, վոր ար-  
դեն բոլորովին չքավոր ե։ Նա պրո-  
յետար ե։ Նա քաղաքի բանվորի հարա-  
գատ յեղբայրն ե»\*։

Միջակը, թեպետ և ծայրը ծայրին ե  
հասցնում իր տնտեսության մեջ, հա-  
ճախ նույնիսկ իր ապրանքները շուկա-  
յե հանում, սակայն նրա տնտեսու-  
թյունը կարող ե զարգանալ միայն այն  
գեպքում, յեթե պաշտպանվի կուլակի  
հափշտակողական ձգտությունը, յեթե  
նա կպայքարի չքավորի հետ միասին  
կուլակի դեմ։

Մեր կուսակցությունն իր պայքա-  
րի ամբողջ պատմության ընթացքում  
շարունակ գյուղական տնտեսություն-  
ների այդ յերկու խմբերի պաշտպանու-  
թյունն ե վորոնել և նրանց հետ միա-  
սին կռիվ ե մղել և կալվածատիրոջ և  
գործարանատիրոջ և՝ կուլակի դեմ։

\* Լենին. Աշխատությունների ժողովա-  
ծու, IX հատոր, 337 յերես։

Յերբ մենք խոսում եյինք գյուղում  
ապրանքային հարաբերությունների  
զարգացման անհաժառակացության մասին,  
մենք դրանով բոլորովին չեյինք ուղում  
անել, վոր մեր հիմքը գյուղում կազ-  
մում ե կուլակը։ Մասնավոր զիջումնե-  
րը, վոր մենք անում ենք ունեոր գյուղա-  
ցուն, նրա համար ե, վորպեսզի լայն շու-  
կայի հիման վրա միջոցներ ավելի շուտ  
հավաքվեն կառավարության և կոռպե-  
րացիայի ձեռքը չբափորների և միջակ-  
ների իրական տնտեսական պաշտպա-  
նության համար։

Մեր ժողովրդական տնտեսության  
այժմյան պայմաններում մենք այդ անել  
չենք կարող, վորովհետև պետության  
տրամադրության տակ բավական չա-  
փով ազատ միջոցներ չկան։

Նրանով, վոր մենք ավելի ազատ իրա-  
վունքներ ենք տալիս հողի վարձակա-  
լության, բանվորական ուժ վարձելու,  
մասնավոր մանր առևտրի զարգաց-  
ման համար և այլն, մենք անկասկած

գյուղացիության ունեոր շերտին զի-  
ջում ենք անում։ Այդ շատ լավ պիտի  
հասկանա յուրաքանչյուր գյուղական  
կոմմունիստ։ Այդ զիջումը մենք անում  
ենք այնպես, ինչպես արինք ՆեՊ-ի  
ժամանակ, յերբ մենք ստիպված եյինք  
զիջում անել մասնավոր-կապիտալիս-  
տական շահերին, բայց զիջեցինք այն-  
պես, վոր նրա հետեւանքով ամրա-  
ցրինք մեր սոցիալիստական հիմքերը՝  
պետական խոշոր արդյունաբերությունն  
ու առևտուրը, վորն ավելի ուժեղ ե,  
քան մասնավորը։ Նույն բանն ենք ա-  
նում մենք նաև այժմ։

Մենք հնարավորություն ենք տալիս  
ունեոր շերտին բարգավաճել ու հա-  
րցատանալ։ Դրա շնորհիվ ապրանքա-  
պտույտը խոշոր չափով կընդարձակվի, և  
ազատ միջոցները կկուտակվեն ինչպես  
պետության, այնպես ել կոռպերա-  
ցիայի ձեռքին։ Այդ միջոցները մեզ  
հնարավորություն կտան ավելի մեծ չա-  
փով ոգնության հասնելու չքափորին և

միջակին, քան այդ մենք կարողանում  
ենք անել այժմ, յերբ գյուղացիությունը  
վարկավորելու գործի համար հնարա-  
վոր ե լինում բաց թողնել շատ ան-  
նշան դումարներ միայն:

Յուրաքանչյուր գյուղական կոմմու-  
նիստ պետք ե շատ պարզ ըմբռնի այս  
և չմոռանա, վոր մեր հենակետը գյու-  
ղում հանդիսանում են միայն միջակն  
ու չքայլորը:

Կուլակն իր դասակարգային վիճակով  
խորհրդային իշխանության թշնամին ե:  
Նրա դեմ մենք պայքարել ենք մինչև  
այժմ, կպայքարենք նաև այսուհետեւ:

Միայն կոմի ձեռն են տարբեր:  
Հոկտեմբերյան հեղաշրջման ժամանակ  
մենք նրան շահագործում եյինք, իսկ  
այժմ մենք նրա դեմ տնտեսական պայ-  
քար ենք մղում, միջակին ու չքավո-  
րին դուրս ենք քաշում աղքատության  
ճիշտաններից, նրանց ազատում ենք կու-  
լակից տնտեսական կախում ունենա-  
լուց: Կուլակության դասակարգային

Եյությունը պետք ե լավ հասկանա վոչ  
միայն յուրաքանչյուր գյուղական կոմ-  
մունիստ, այլ և գյուղի ամեն մի չքա-  
վոր և միջակ: Մենք պետք ե չքավոր-  
ների և միջակների միասնական ձակատ  
ստեղծենք կուլակների դեմ:

Ինչքան վոր մոտակա ժամանակա-  
շրջանում ունեոր շերտը տնտեսապես  
ամբանա, այնքան գյուղում անելու յե  
գյուղական պլոյետար՝ բատրակների  
շերտը, վորին մեր կուսակցության  
գյուղական կազմակերպությունները  
պետք ավելի մեծ ուշադրություն նվի-  
րեն, քան մինչև այժմ նվիրել են:

Գյուղում բատրակները դեռ շատ թույլ  
են կազմակերպված, և մեծ գործադրկու-  
թյան հետևանքով դժվար ե նրանց հա-  
մար կոփի մղել իրենց աշխատանքի պայ-  
մանների լավացման համար: Միաժամա-  
նակ կուլակությունն ումեն կերպ հալա-  
ծում ե բատրակների կազմակերպու-  
թյունը, գործ չի տալիս նրանց, ովքեր  
արհեստակցական միության անդամ են:

Սակայն գյուղական պրոլետարների այդ  
շերտն իր դասակարգային վիճակով  
հանդիսանում ե բաղաքի բանվորի ա-  
մենաամուր և տոկուն դաշնակիցը:

Գյուղական ըջիջը միշտ պետք ե հետեւ,  
վոր գյուղի բոլոր բատրակներն անպայ-  
սանորեն ցուցակագրված լինեն գյուղ-  
խորհրդում, վոր նրանց վերաբերյալ աշ-  
խատանքային պայմանագիր կնքվի, վոր  
բատրակն արհեստակցական միության  
անդամ լինի: Մենք այժմ իսկույն և եթ  
չենք կարող համնել այնպիսի դրության,  
վոր բատրակն իր աշխատանքի և աշխա-  
տավարձի պայմաններով նույն պայ-  
մաններում գտնվի, ինչ վոր քաղաքի  
բանվորն ե, սակայն նրա հաճախ ուղ-  
ղակի բարբարոսական պայմանները վո-  
րոշ, թեկուզ մասնակի չափով մենք  
լավացնել կարող ենք:

Բատրակների վերաբերմամբ աշխա-  
տանքի մի խոշոր մասն ընկնում ե կոմ-  
յերիտմիության վրա: Բատրակությու-  
նը սովորաբար բաղկացած ե յերիտա-

ուր գներից: Կոմյերիտմիությունը  
պետք ե նրանց գրավի իր շարքե-  
րը, պետք ե հոգ տանի, վորպեսզի  
վարձելու ժամանակ աշխատանքային  
պայմանագիր կնքվի, պետք ե աշխա-  
տի յուրաքանչյուր բատրակի դարձնել  
արհմիության անդամ:

Յեթե մեր կուսակցությանը հաջող-  
վեր մոտակա տարիների ընթացքում  
համախմբել ամբողջ բատրակությունն  
արհեստակցական միությունների մեջ,  
դարձնել նրանց դասակարգային տեսա-  
կետից գիտակից աշխատավորներ, ապա  
նրանք կկարողանային գյուղի քաղաքա-  
կան կյանքում աշքի ընկնող դեր  
խաղալ:

Այժմ արդեն յուրաքանչյուր գավա-  
ռակում կարելի յե հաշվել միքանի  
հարյուր բատրակ: Յեթե նրանց հա-  
մախմբենք արհմիության մեջ, յեթե  
լուրջ կերպով զբաղվենք նրանց դաս-  
տիարակության խողով, նրանք կդառ-  
նան այնպիսի մի ուժ, վորին անկա-

բելի կմինի հաշվի չառնել։ Նրանք մեր  
կուսակցության համար գյուղում ու-  
ժեղ հենակետ կդառնան։

Վերոհիշյալ խնդիրներն իրենց բարե-  
հաջող լուծումը կստանան միայն այն  
դեպքում, յերբ մենք լուրջ կերպով կրզ-  
բարձինք մեր կուսակցության գյուղա-  
կան կազմի վերաբաստիարակությամբ։

Գյուղի կոմմունիստի քաղաքական  
պատրաստության մակարդակը վերին  
աստիճանի ցածր ե։ Շատ հաճախ  
նրանք դժվարությամբ են յուրացնում  
այն խնդիրները, փոր առաջ և քաշում  
կուսակցությունը։ Գյուղական կոմմու-  
նիստների քաղաքական պատրաստու-  
թյան ցած մակարդակի շնորհիվ մի-  
այն, փոր նրանք այդպես դժվարու-  
թյամբ են յուրացնում կուսակցության  
ժամանակակից կուրսը գյուղի վերա-  
բերյալ։ Յեթե գյուղական կոմմունիս-  
տըն անմիջապես ճշշտ հասկանար «յե-  
րեսներ» դեպի գյուղ՝ լոգունգը, նրան  
համապատասխան գծեր իր աշխատանքին

ուղին, ապա այն ժամանակավոր հաջո-  
ղությունները, վոր հաճախ ունենում  
են կուլակները, տեղի չեյին ունենա-  
չածախ մենք նկատում ենք նաև այնպի-  
սիդեպքեր, յերբգյուղական անկուսա-  
կցական ակտիվ իր քաղաքական պատ-  
րաստությամբ մեր կոմմունիստներից  
ավելի բարձր ե կանգնած։ Այդպիսի ան-  
կուսակցական գյուղացին ճշտությամբ  
հետևում ե թերթերին, կարող ե նաև  
ուրիշներին պատմել աշխարհում տեղի  
ունեցող բոլոր նորությունները։ Նա  
կարողանում ե ավելի լավ մեկնաբանել  
խորհրդային իշխանության կողմից ձեռք  
առնվող միջոցները։

Լավ ե, յեթե այդպիսի գյուղացին  
լավ ե տրամադրված դեպի խորհրդային  
իշխանությունը և ուղիղ լուսաբանու-  
թյուն ե տալիս փաստերին։ Իսկ յեթե  
նա կուլակ ե և խորհրդային իշխա-  
նության կարգադրությունների իսկա-  
կան իմաստը խեղաթյուրում ե։  
Կոմմունիստը չի կարող անկուսա-

կցականների ղեկավար դառնալ, յեթե  
իր քաղաքական պատրաստությամբ  
նրանց հետ միևնուշն մակարդակի վրա  
յե կանգնած։ Այդ պատճառավ միանգա-  
մայն ժամանակին ե, վոր մեր կուսա-  
կցությունն առաջե քաշում գյուղական  
կոմմունիստների ամենալուրջ վերա-  
պատրաստության խնդիրը։ Այդ անհրա-  
ժեշտ ե անել նաև այն պատճառով,  
վոր այժմ գյուղական բջիջի շարքերն  
են մասնում բավականաչափ անկուսա-  
կցական մաճկալ գյուղացիներ։ Այդ  
գյուղացիներն իրենց հետ մեր կու-  
սակցությունն են բերում իրենց գյու-  
ղացիական տրամադրություններն ու  
նախապաշարումները։ Նրանց քաղաքա-  
կան պատրաստության վրա հարկ յե-  
ղած ուշադրությամբ աշխատանք թա-  
փելուց հետո յե միայն, վոր նրանք  
կդառնան մեր կուսակցության դասա-  
կարգային վոգին ըմբռնող իսկական  
կոմմունիստներ։

Մի շարք տարիների ընթացքում

ձմեռային շրջանները պետք ե դառ-  
նան գյուղական կոմմունիստի դաս-  
տիարակության դպրոցը։

Այդ աշխատանքը պետք ե ընթանա-  
հետևյալ ուղղությամբ։

Մեր կուսակցությունը պետք ե իր մի-  
ջից ջոկի բավականին քանակությամբ  
միանգամայն պատրաստված պրոպա-  
գանդիստներ և ուղարկի գյուղը, վոր-  
պեսզի սրանք քաղզրագիտության դըպ-  
րոցների գործն ուղիղ հիմքերի վրա  
դնեն։

Մեր կուսակցությունն ագատ կեր-  
պով կարող ե իր միջից միքանի  
հազար հոգի այդպիսի աշխատավորներ  
ջոկել և ուղարկել գյուղ։ Միայն հար-  
կավոր ե աշխատել վորպեսզի քաղա-  
քի կազմակերպությունները ջոկեն իրոք  
արժանավոր, քաղաքականապես միան-  
գամայն պատրաստված ընկերներ,  
վորոնք կկարողանան քաղզրագիտու-  
թյան դպրոցների աշխատանքներն ու-  
ղիղ հիմքերի վրա դնել։

Բոլոր գյուղական կոմմունիստները  
պետք ե պարտադիր կերպով անցնեն  
այդ դպրոցներից և այնտեղ ստանան  
մարքսիստական ուսմունքի հիմնական  
գիտելիքները, կապելով այն ժամանա-  
կակից իրականության հետ:

Բացի ընդհանուր քաղաքական պատ-  
րաստությունից, անհրաժեշտ ե զբաղվել  
նաև միքանի գործնական ճյուղերի աշ-  
խատավորներ՝ կոռպերատորներ, գյուղ-  
բջիջների քարտուղարներ, խրճիթավար-  
ներ և այլն պատրաստելով։ Դրանց հա-  
մար պետք ե կազմակերպել վերապատ-  
րաստման կարճատև կուրսեր, վորտեղ  
գյուղի գործնական աշխատավորներն  
իրենց փորձը պետք ե հիմնավորեն  
տեսական գիտելիքներով և գործը դնե-  
լու տեխնիկան ուսումնասիրելով։

Վելջապես անհրաժեշտ ե գյուղի հա-  
մար պատրաստել քաղաքական լայն հո-  
րիզոն և կոնկրետ ինդիքների լուծմանը  
մոտենալու գործնական ընդունակու-  
թյուն ունեցող մշտական աշխատողներ։

Այդ գործը կատարողները պիտի  
լինեն մեր խորհրդային կուսակցական  
դպրոցները։

Մեր կուսդպրոցները պետք ե ավե-  
լի մեծ քանակությամբ կոմմունիստ-  
ներ ընդունեն անմիջապես գյուղից,  
վորպեսզի դպրոցն ավարտելուց հետո  
նրանք նորից վերադառնան գյուղ՝  
այնտեղ գործնական աշխատանքներ  
կատարելու համար։

Լավ պատրաստված կոմմունիստների  
այդ կաղըը հետագայում պետք ե փո-  
խարինի ժամանակավորապես գյուղ  
գործուղղված կոմմունիստներին։

Բացի գյուղական կոմմունիստներին  
այդպիսի սիստեմատիկ դպրոցական  
աշխատանքներով վերապատրաստելուց,  
անհրաժեշտ ե արթնացնել նրանց մեջ  
ինքնակրթությամբ պարապելու ան-  
հրաժեշտության գիտակցությունը,  
արթնացնել նրանց մեջ սեր գեպի  
թերթեր ու գրքեր կարգալը։

Շատ հաճախ նկատելի յեն նաև

այնպիսի դեպքեր, յերբ գյուղական  
կոմմունիստը բոլորովին թերթեր չի  
ստանում, յերբ ամիսների ընթացքում  
վոչինչ չի կարդում։ Այդպիսի կոմմու-  
նիստը սոցիալիստական պետություն  
կառուցելու գործում կուսակցությանը  
վոչ մի որուտ չի կարող բերել։ Գյուղա-  
կան կոմմունիստը պետք ե իրազեկ լինի  
աշխարհի ամբողջ անցու դարձին, նա  
պետք ե կարողանա սպառող պատասխան  
տալ գյուղացիների հարցումներին, իսկ  
նա այդ կարող ե անել միայն այն ժա-  
մանակ, յերբ շարունակ հետեւ քաղա-  
քական կյանքի անցուդարձին, յերբ  
սովորություն դարձնի շարունակ թեր-  
թեր, գրքեր, լրագրներ կարդալը։

Կոմմունիստը վոչ միայն ինքը պետք  
ե կարդա, այլ պետք ե ջանք թափի,  
վոր թերթերը մուտք գործեն նաև  
անկուսակցական գյուղացիության մեջ։


Ազիտացիա մղել հոգուտ թերթ ստա-  
նալու, հոգ տանել, վոր խրճիթ ընթեր-  
ցարանի աշխատանքն ուղիղ հիմքերի

վրա դրվի, անձամբ բարձրաձայն կար-  
դալ գրքեր և թերթեր ու բացատրել—  
ահա ամեն մի գիտակից գյուղական  
կոմմունիստի պարտականությունները։

Շատերը պարզ չեն գիտակցում այն  
հսկայական նշանակությունը, վոր ու-  
նի մամուլը, մինչդեռ պրոլետարիատի  
ձեռքին գտնվող թերթը գյուղացու և  
բանվորի միջև սերտ միություն ստեղ-  
ծելու ամենաարժեքավոր միջոցներից  
մեկն ե հանդիսանում։

Պետք ե վոչ միայն կարդալ իմանալ,  
այլ և միաժամանակ թերթերում լու-  
սաբանել գյուղում տեղի ունեցող ամե-  
նահետաքրքիր պրոցեսները։ Մեր կու-  
սակցությունն, ինչպես արտահայտվել  
ե ընկեր Զինովյեր, պետք ե իմանա  
անգամ այն, թե խոտը ինչպես ե բուս-  
նում։ Դրան մենք կարող ենք հասնել  
միայն այն ժամանակ, յերբ կոմմու-  
նիստները կամ իրենք, կամ անկու-  
սակցական գյուղթղթակիցների միջո-  
ցով։ Ճիշտ կլուսաբանեն գյուղացիու-

թյան մեջ տեղի ունեցող պրոցեսոները:  
Վերջապես վերջին խնդիրը, վոր  
գյուղում կանգնած ե մեր կուսակցու-  
թյան առաջ, այն ե, վոր պետք ե շա-  
րունակ հետեւ մեր գյուղական  
կազմակերպությունների վորակական  
կազմին։ Մինչև այժմ ել մեր կու-  
սակցության մեջ թափանցում են վա-  
տորակ տարրեր, վորոնք իրենց գոր-  
ծերով վարկաբեկում են ամբողջ կու-  
սակցությունը. Գյուղական բջիջն ու-  
շադրությամբ պիտի հետեի իր անդամ-  
ների աշխատանքներին, մատնացույց  
անի նրանց թերությունները և չուղղղ-  
վելու դեպքում ձեռք առնի կուսա-  
կցական կտրուկ միջոցներ։ Մեզ ան-  
հրաժեշտ ե գյուղում ունենալ ու-  
ժեղ, գիտակից և գյուղացիության  
մեջ հետինակություն ունեցող կոմմու-  
նիստների կադր։ Միայն այն ժամա-  
նակ մենք իսկական խորհրդային  
գյուղ կստեղծ



ՀՀ Ազգային գրադարան



NL0182699

БИБЛІОГРАФІЧНА  
УМОВА  
ВІДНОСІЙДЕННЯ  
Академії Наук  
С. С. Р.



ԳԻՒԸ 30 ԿՈՊ.